ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՊԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆԻ ՃԱՌԸ

(Ըստ ասասնված յօրելեանական հանդիսին ներսիսեան պարոյսով)

Ձերդ բարձր գերազանցութիւն, ձերդ սրբազանութիւն, յարգելի պարոներ ու տիկիններ, թոյլ տուէք ինձ Թիֆլիս քաղաքի, նրա ազգաբնակութեան և ինքնավարութեան ա-նունից արտայայտել ամբողջ հայ ժողովրդին, յանձին Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ցերմագին խնդակցութիւն այսօրվայ հանդիսի առիթով։ Տասնհինգ դար առաջ, հայ ժողովրդի կեանքի ասկիզբն չը-ջանում, զանվեցին հայ գրերը։ Եւ նրանք չը կորան, չոչնչացան այն սոսկալի արեան հեղեղներում ու տանջանքների հնոցում, որոնց միջից անցան հայոց պատմութիւնն ու հայ ժողովուրդը։ Ճակատագիրը հաց-րեց նրանց մինչև մեր օրերը։ Զորս հա-րիւր տարի առաջ առաջին անգամ լոյս տե-սաւ հայերէն լեզուով հրատարակված գիր-քը։ Եւ ժողովրդի կուլտուրական կենսու-նակութեան այդ մեծ կոթողները հանդիսա-նում են այն անշէջ հուրը, որը Ներ-մացնում է ժողովրդի կեանքը նրա գոյու-թեան ամենամայլ շրջաններում։ Նրանց շնորհիւ, հայ ժողովուրդը ապացուցեց իր իրաւունքը գոյութիւն ունենալու աշխարհս կուլտուրական ազգերի շարքում, և այդ իրաւունքը այժմ ոչ ոք չէ ժխտում։ Բայց գոյութիւն ունենալ՝ չի նշանակում ապրել միայն ֆիզիքական կեանքով։ Թոյլ տուէք ինձ մաղթելու, որպէսզի՝ այլ և այլ երկիր-ներում ապրող հայերի համար հաւասար չափով ամենուր տեղ էլ լինի այնպիսի հնա-բաւորութիւն խաղաղ կեանքի, որ անխոռով կարողանան վայելել մայրենի դպրոցի և նրա զինքի՝ տպարական գրքի մեծ բա-րիքները ու ձգել իրանց լուսաւոր աշխարհի ընդհանուր կուլտուրական զանձանակը։ Թոյլ տուէք մաղթել, որպէսզի հայ ժողո-վուրդը, որ մի շարք դարերի միջից բերել-հասցրել է իր ազգային հոգևոր դէմքը, ա-մենուրեք կարողանայ վայելել մարդկային կեանքի այն պայմանները, որոնց մէջ ամեն մի գեղջուկ ու բանչար լինէր գրագէտ ու կարողանար գիտակցօրէն մասնակից լինել մեծ հայրերին՝ Սահակին ու Մեսրոպին մե-ծարելուն։ Թիֆլիսի բոլոր ալացեղ ազգա-բնակութիւնը այս հանդիսաւոր օրերին Ներ-մացին բարեմաղթում է հայերի կուլտու-րական-հոգևոր կեանքին բազմաւոր զարգ-ացում։ Անցեալի յուշարձանները թող ո-գևորեն ժամանակակիցներին՝ յետագայում մեծագործութիւններ կատարելու։